«ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

ք. Երևան

Բովանդակություն

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ 3

2. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

3. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 3

4. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ 6

5. ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ 7

6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ 10

7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ 12

8. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՊԱՏՎԵՐԻ ԿԱՏԱՐՄՈՒՄ 13

9. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ 14

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Սույն կանոնները (այսուհետ Կանոններ) սահմանում են «ՎՏԲ-Հայաստան Բանկ» Փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ բանկ) Հաճախորդների կողմից Բանկ ներկայացված Արժեթղթերով գործարքների կնքման պատվերների ընդունման, հաղորդման, ինչպես նաև Հաճախորդների հաշվին Արժեթղթերով գործարքների կատարման (այսուհետ Բրոքերային ծառայություններ) կարգն ու պայմանները:

1.2. Սույն Կանոններին համապատասխան Բանկը մատուցում է Բրոքերային ծառայություններ ՀՀ տարածքում, ինչպես նաև ՀՀ Կենտրոնական Բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված օտարերկրյա պետությունների ցանկում ընդգրկված որևէ պետությունում հրապարակային առաջարկին (վաճառքին) և/կամ առևտրին թույլատրված կամ ՀՀ Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված՝ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գործող Կարգավորող շուկաների ցանկում ընդրկված որևէ Կարգավորող շուկայում առևտրին թույլատրված արժեթղթերով:

1.3. Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի նորմատիվ և այլ իրավական ակտերի համապատասխան:

2. ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2.1. **«Բրոքերային ծառայություններ»**. իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:

2.2. **«Կարգավորվող շուկա»**. հանրության համար ուղղակիորեն կամ անուղղակիորեն մատչելի կազմակերպչական, իրավական և տեխնիկական միջոցների համակարգ, որը կանոնավոր կերպով արժեթղթերի առքի և վաճառքի առաջարկների հանդիպման վայր կամ միջոց է կազմակերպում, տրամադրում, ապահովում կամ իրականացնում է արժեթղթերով առևտրի կազմակերպման սովորաբար իրականացվող գործառույթներ: Կարգավորվող շուկան ներառում է ֆոնդային բորսան և այլ կարգավորվող շուկաները:

2.3. **«Հաճախորդ»**. անձ, որի հետ Ընկերությունն ունի բրոքերային ծառայությունների մատուցման կամ բրոքերային հաշվի վերաբերյալ գործող պայմանագիր:

2.4. **«Ներդրումային ծառայություններ մատուցող անձ».** ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ներդրումային ծառայությունների մատուցման համար պատասխանատու ստորաբաժանում:

2.5. **Պատասխանատու աշխատակից.** Ներդրումային ծառայություններ մատուցող անձի աշխատակից, որը Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերի հիման վրա իրականացնում է Արժեթղթերի առք ու վաճառքի գործառնություններ:

2.6. **«Սպասարկող».** Բանկի աշխատակից, որը Հաճախորդներից ընդունում է Պատվերներ, հաղորդում վերջիններս Պատասխանատու աշխատակցին և Պատվերների հիման վրա կատարված գործարքների գծով Հաճախորդներին ներկայացնում է հաշվետվություններ:

2.7. **«Պատվեր»**. արժեթղթերով գործարքների կնքման նպատակով ներկայացվող հաճախորդի հանձնարարականը, ինչպես նաև ներդրումային ծառայություն մատուցող անձի

կարգադրությունը, հանձնարարությունը, հայտը կամ առաջարկը:

2.8. **«Լիմիտային պատվեր».** առքի դեպքում պատվերում նշված գնով կամ դրանից ավելի ցածր գնով (վաճառքի դեպքում՝ պատվերում նշված գնով կամ դրանից ավելի բարձր գնով) որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր:

2.9. **«Շուկայական պատվեր».** շուկայում տվյալ պահին ձևավորված գնով որոշակի ծավալի արժեթղթի առքի (վաճառքի) պատվեր:

2.10. **«Բավարարել լրիվ» պատվեր.** Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում՝ նրանում նշված քանակով արժեթղթերի գնման կամ վաճառքի պայմանով:

2.11. **«Բավարարել մասնակի» պատվեր.** Պատվեր, որը նախատեսում է Պատվերի մասնակիորեն կատարում՝ մնացորդը Պատվերների հերթում ընդգրկելու պայմանով:

2.12. **«Հանել մնացորդը» պատվեր.** Պատվեր, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում Պատվերում նշված արժեթղթի քանակի հնարավոր առավելագույն չափով՝ մնացորդը Պատվերների հերթում չընդգրկելու պայմանով:

2.13. **«Անմիջապես բավարարել կամ հանել» պատվեր.** Պատվեր, որը նախատեսում է Պատվերի անմիջապես կատարում՝ նրանում նշված գնով և լրիվ քանակով, հակառակ դեպքում Պատվերը չընդգրկելով Պատվերների հերթում:

2.14. **«Պահել հերթում մինչև բավարարումը» պատվեր.** Պատվեր, որը նախատեսում է, որ Պատվերը կարող է մնալ հերթում՝ մինչև Պատվերում նշված լրիվ քանակով արժեթղթերի գնումը կամ վաճառքը:

2.15. **«Գնման/վաճառքի ստոպ պատվեր».** Պատվեր, որը նախատեսում է Պատվերի կատարում (արժեթղթերի առք/վաճառք) ՝ նրանում նշված գնին բորսայում կամ բորսայից դուրս տվյալ արժեթղթի գինը հասնելու դեպքում:

2.16. **«Գնման/վաճառքի ստոպ լիմիտային պատվեր».** Պատվեր, որը միաժամանակ ներառում է գնման (վաճառքի) լիմիտային պատվերը մի գնով և գնման (վաճառքի) ստոպ պատվերը մեկ այլ գնով:

2.17. **«Օրենք».** «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենք:

2.18. **«Տեղեկատվության փոխանցման հուսալի միջոց».** ցանկացած միջոց, որը հաճախորդին հնարավորություն է տալիս ստանալ և պահպանել անձնապես իրեն ուղղված տեղեկատվությունը, և որը հետագայում հնարավորություն կտա այն լիարժեք օգտագործել և պահպանված տեղեկատվությունը վերարտադրել:

2.19. Սույն կանոններում օգտագործված այլ հասկացություններն ունեն Օրենքում կիրառվող նշանակությունը:

3. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկը, ի դեմս Սպասարկողի, նախքան բրոքերային պայմանագիր կնքելը, Հաճախորդին

ներկայացնում է հետևյալ տեղեկատվությունը՝

3.1. **Բանկի մասին ընդհանուր տեղեկություններ:** Հաճախորդին ներկայացվում է Բանկի անվանումը, կապի միջոցները, ներդրումային ծառայության մատուցման հիմքերը, լիցենզավորող իրավասու մարմնի անվանումը և կապի միջոցները:

3.2. **Բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման և տեղեկատվության փոխանակման միջոցների վերաբերյալ :** Հաճախորդին ներկայացվում է հաղորդակցման լեզուները, տեղեկատվության փոխանցման մեթոդները, պատվերների ընդունման և հաղորդման կարգը, տեղեկատվություն հաճախորդներին ներկայացվող հաշվետվությունների, դրանց ներկայացման հաճախականության և ժամկետների, ինչպես նաև ներկայացման կարգի մասին և այլն:

3.3. **Շահերի բախումները կանխարգելող միջոցառումների համառոտ նկարագիրը**: Հաճախորդի պահանջով կարող է տրամադրվել բանկի կողմից հաստատված ամբողջ կարգը :

3.4. **Արժեթղթերի մասին տեղեկատվություն**, մասնավորապես՝

– **Արժեթղթերի և դրանց հետ առնչվող ռիսկերի նկարագիր:** Այդ նկարագրով պարզ և հասկանալի ձևով ներկայացվում են յուրաքանչյուր տեսակի (բաժնետոմս, պարտատոմս և այլն) արժեթղթի առանձնահատկությունները, ինչպես նաև դրանց առնչվող ռիսկերը:

– **Այդ պահին հրապարակային առաջարկի առարկա հանդիսացող արժեթղթերի մասին**: Այս դեպքում բանկը հաճախորդին տեղեկացնում է, թե որտեղ է հրապարակված այդ ազդագիրը կամ որտեղից կարելի է այն ձեռք բերել:

– Այն դեպքերում, եթե արժեթղթից բխող ռիսկերը երաշխավորված են երրորդ անձի կողմից, բանկը հաճախորդին ներկայացնում է տեղեկատվություն երաշխավորության և երաշխավորություն տվողի մասին: Բանկ պետք է հաճախորդին տեղեկացնի նաև, որ արժեթղթերում ներդրումները երաշխավորված չեն ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջոցներով:

3.5. Սպասարկողը հաճախորդին պետք է տրամադրի բրոքերային ծառայությունների դիմաց վճարվելիք գումարների մասին տեղեկատվություն : Մասնավորապես՝

– վճարման ենթակա համախառն գումարը՝ ներառյալ բոլոր միջնորդավճարները, ծախսերը և այլ վճարները, ինչպես նաև բոլոր հարկային վճարները, որոնք պահվում են բանկի կողմից՝ որպես հարկային գործակալ: Եթե հնարավոր չի լինում տեղեկացնել գանձման ենթակա ճշգրիտ գումարի մասին, ապա պետք է ներկայացնել հաշվարկման կարգ:

– եթե նախորդ ենթակետում նշված համախառն գումարի որևէ մաս վճարվում է արտարժույթով կամ ներկայացված է արտարժույթով, ապա նշվում է արտարժույթը, փոխանակման կուրսը և դրա հետ կապված ծախսերը.

– վճարումներ կատարելու եղանակները:

Պրոֆեսիոնալ հաճախորդի դեպքում վերը նշված տեղեկատվության տրամադրումը պարտադիր չէ :

4. ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇՎԻ ԲԱՑՈՒՄ ԵՎ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿՆՔՈՒՄ

4.1. Բրոքերային հաշիվը բացվում է բանկում հաճախորդի բանկային (ընթացիկ) և դեպո հաշվի առկայության դեպքում:

4.2. Բրոքերային հաշվի բացումը կատարվում է բանկի և հաճախորդի միջև բրոքերային պայմանագիր կնքելու, ինչպես նաև դրանով և սույն կանոններով նախատեսված փաստաթղթերի ամբողջ փաթեթը ներկայացնելու դեպքում: Բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացվեն թղթային ձևով: Փաստաթղթերի կրկնակի ներկայացում չի պահանջվում, այն փաստաթղթերի համար, որոնք նախկինում ներկայացվել են հաշվարկային կամ դեպո հաշիվ բացելու համար:

4.3. Այն դեպքում, երբ որևէ փաստաթուղթ, այդ թվում՝ լիազորագրերը անվավեր կամ ուժը կորցրած են ճանաչվել, ապա հաճախորդը պարտավոր է ներկայացնել նշված փաստաթղթերը նոր խմբագրությամբ:

4.4. Բրոքերային հաշիվ բացելու համար բանկ ներկայացվում է՝

Իրավաբանական անձանց համար

- Հաշիվ բացելու դիմում (Տես Հավելված # 1ա)
- Հաճախորդի մասին տեղեկանք (Տես Հավելված # 2)
- Լիազորված ներկայացուցիչների ստորագրությունների քարտ (Տես Հավելված # 3)
- Լիազորված ներկայացուցչի նշանակման համապատասխան լիազորագիր
- Կանոնադրության պատճեն՝ իր բոլոր գրանցված փոփոխություններով և լրացումներով,
- ՀՎՀՀ տեղեկանքի պատճեն
- Առանց լիազորագրի գործելու իրավունք ունեցող անձի (անձանց)
- համապատասխան պաշտոնի նշանակման փաստը հաստատող փաստաթղթի պատճեն

Ֆիզիկական անձանց համար

- Հաշիվ բացելու դիմում (Տես Հավելված # 1բ)
- Հաճախորդի մասին տեղեկանք (Տես Հավելված # 4)
- Լիազորված ներկայացուցիչների ստորագրությունների քարտ (Տես Հավելված # 3)
- Լիազորված ներկայացուցչի նշանակման համապատասխան լիազորագիր
- Հաճախորդի անձի ինքնությունը հաստատող փաստաթղթի պատճեն
- Սոցիալական քարտի պատճեն

4.5. Բրոքերային հաշիվ բացելու համար Հաճախորդը պետք է նաև ներկայացնի «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանք (Տես Հավելված #5), որը հնարավորություն կտա բանկին գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի պահանջներին, թե ոչ: Ներդրումային ծառայություններ մատուցող անձը հիմնվում է հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք :

4.6. Այն դեպքում, երբ հաճախորդը չի տրամադրում գիտելիքների և փորձի մասին տեղեկանքը կամ տրամադրում է ոչ բավարար տեղեկատվություն, ապա բանկը զգուշացնում է հաճախորդին այն մասին, որ հաճախորդի նման վարքագիծը թույլ չի տալիս գնահատել, թե արդյո՞ք տվյալ ներդրումային ծառայությունը կամ արժեթուղթը համապատասխանում է հաճախորդի

պահանջներին:

4.7. «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանք ներկայացնելուց հետո Սպասարկողը որոշում է, թե արդյո՞ք հաճախորդն ունի ներդրումային գործունեության բնագավառում անհրաժեշտ գիտելիքներ և փորձ, որպեսզի հասկանա տվյալ ներդրումային ծառայությունից կամ արժեթղթից բխող ռիսկերը: Բանկի գնահատականը տրամադրվում է Հաճախորդին (Տես Հավելված #5):

4.8. Բանկը իրավասու է օգտագործել հաճախորդի քարտում ներկայացված տեղեկությունները ՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված պահանջների ապահովման նպատակով:

4.9. Հաճախորդն իրավունք ունի Պայմանագրի գործողության ընթացքում փոփոխել «Գիտելիքների և փորձի մասին» տեղեկանքը:

4.10. Բրոքերային հաշվի բացման ժամանակ դրան շնորհվում է բանկի կողմից առանձնահատուկ տարբերակիչ ծածկագիր, որը հնարավություն է տալիս նույնականացնել հաճախորդին: Բանկը հաճախորդի կողմից ներկայացված փաստաթղթերը ուսումնասիրելուց հետո 3 օրվա ընթացքում հաճախորդին տրամադրում է «Բրոքերային հաշիվ բացելու մասին տեղեկանք» (Տես Հավելված # 6 ա և Հավելված # 6բ):

5. ՊԱՏՎԵՐԻ ՁԵՎԸ ԵՎ ԴՐԱ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

5.1. Հաճախորդի արժեթղթերով և/կամ դրամական միջոցներով գործարքների կնքման համար հիմք է հանդիսանում Հաճախորդի կողմից ներկայացված պատվերը :

5.2. Պատվերի ձևը ներկայացված է Հավելված # 7-ում: Պայմանագրով կարող են նախատեսվել այլ տեղեկություններ՝ սահմանված Բանկի և հաճախորդի փոխադարձ համաձայնությամբ:

5.3. Պատվերների ներկայացման եղանակը ընտրվում է Հաճախորդի կողմից (Տես Հավելված #2 և Հավելված #4) : Մասնավորապես հաճախորդը կարող է ընտրել Պատվերների ներկայացման հետևյալ եղանակները՝

- Թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով),
- Ֆաքսիմիլային,
- Էլեկտրոնային,
- Հեռախոսով:

ա) <u>Թղթային (ներառյալ փաստաթղթերի փոխանցումը փոստով)</u>

1. Թղթային ձևով պատվերը ներկայացվում է 2 օրինակից, ընդ որում մեկ օրինակը մնում է Բանկում, մյուս օրինակը «Պատվերն ընդունված է» նշագրմամբ և Սպասարկողի ստորագրությամբ վերադարձվում է հաճախորդին: Թղթային եղանակով Պատվերը ներկայացնելու դեպքում Սպասարկողը ստուգում է Պատվերը ներկայացնող անձի լիազորությունները :

բ) <u>Էլեկտրոնային եղանակով պատվերի փոխանցում</u>

1. Էլեկտրոնային եղանակով Պատվերը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ էլեկտրոնային հասցեով: Այլ հասցեով ուղարկված Պատվերը համարվում է չստացած:

2. Էլեկտրոնային եղանակով Պատվերը ստանալուց հետո Սպասարկողը ստուգում է՝

– Լրացված վավերապայմանների ամբողջականությունը,
– Պատվերում ներառված այլ լրացուցիչ վավերապայմանների առկայությունը, որոնք նախատեսվել են բրոքերային սպասարկման պայմանագրով,
– Ստորագրող անձանց լիազորությունները,
– Ստորագրության և կնիքի համապատասխանությունը Բանկ ներկայացված ստորագրության և կնիքի նմուշի հետ:

3. Պատվերը ստուգելուց հետո Սպասարկողը ստորագրում է պատվերը և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Հաճախորդին ուղարկում է Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է Հաճախորդի կողմից տրամադրված կամ ֆաքսիմիլային, կամ էլեկտրոնային հասցեով:

4. Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկ փոխանցի Էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերի բնօրինակը : Էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Պատվերի բնօրինակը: էլեկտրոնային փոստով ուղարկված Պատվերի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում էլեկտրոնային փոստով ուղարկված տարբերակը:

գ) <u>Ֆաքսիմիլային եղանակով պատվերի փոխանցում</u>

1. Ֆաքսիմիլային եղանակով պատվեր ներկայացնելու համար, հաճախորդը նախորոք հեռախոսով պետք է տեղեկացնի Սպասարկողին՝ պատվեր ուղարկելու փաստի վերաբերյալ: Պատվերը պետք է ուղարկվի Բանկի կողմից տրամադրված հատուկ հեռախոսահամարով: Այլ հեռախոհամարով ուղարկված Պատվերը համարվում է չստացած:

2. Պատվերը ստանալուց հետո Սպասարկողը ստուգում է՝

– Լրացված վավերապայմանների ամբողջականությունը
– Պատվերում ներառված այլ լրացուցիչ վավերապայմանների առկայությունը, որոնք նախատեսվել են բրոքերային սպասարկամն պայմանագրով
– Ստորագրող անձանց լիազորությունները
– Ստորագրության և կնիքի համապատասխանությունը Բանկ ներկայացված ստորագրության և կնիքի նմուշի հետ (առկայության դեպքում)

3. Պատվերը ստուգելուց հետո Սպասարկողը ստորագրում է պատվերը և ֆիքսում է ընդունման ժամը, որից հետո Հաճախորդին ուղարկում է Պատվերի ընդունման կամ մերժման մասին համապատասխան հաղորդագրություն: Հաղորդագրությունը ուղարկվում է Հաճախորդի կողմից տրամադրված կամ ֆաքսիմիլային, կամ էլեկտրոնային հասցեով :

4. Հաճախորդը պետք է հնարավորինս սեղմ ժամկետներում Բանկ փոխանցի ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Պատվերի բնօրինակը : Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Պատվերը ունի նույնքան իրավաբանական ուժ, որքան Պատվերի բնօրինակը: Ֆաքսիմիլային եղանակով ուղարկված Պատվերի և հետագայում փոխանցված բնօրինակի միջև տարբերության դեպքում հիմք է ընդունվում ֆաքսիմիլային եղանակով ուղարկված տարբերակը:

դ) <u>Հեռախոսով պատվերի փոխանցում</u>

1. Հաճախորդի կողմից հեռախոսով Պատվերը կարող է ընդունվել, եթե այն ներկայացվել է հաճախորդի նախնական համաձայնությամբ և Բանկի կողմից տեխնիկական հագեցվածության պահանջների պահպանման դեպքում (հեռախոսազրույցը պետք է պատշաճ ձևով ձայնագրվի, մասնավորապես պետք է գրանցվի պատվերի բովանդակությունը և այն ներկայացնելու փաստը):

2. Հեռախոսով Պատվեր փոխանցելու նպատակով Հաճախորդին տրամադրվում է հատուկ գաղտնագիր : Գաղտնագրի տարածման պատասխանատվությունը երրորդ անձանց կրում է Հաճախորդը :

3. Հեռախոսով Պատվեր փոխանցելու համար Հաճախորդը պետք է հայտնի գաղտնագիրը և անուն ազգանունը (անվանումը) Սպասարկողին: Անձը, որը հեռախոսով հայտնել է գաղտնագիրը և հաճախորդի անուն, ազգանունը (անվանումը) Բանկի կողմից դիտարկվելու է որպես հաճախորդ:

4. Հեռախոսով պատվերի ներկայացման դեպքում Սպասարկողը ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը հեռախոսով ստացված տեղեկատվության հիման վրա լրացնում և ստորագրում է հեռախոսով պատվերի ներկայացման համար սահմանված հատուկ ձևը (Տես Հավելված # 8)՝ նշելով տեղեկատվության ստացման ժամանակը (ոչ թե իր կողմից պատվերի լրացման ժամկետը) րոպեի ճշտությամբ և իր անունը, ազգանունը:

5.4. Պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի մերժել Հաճախորդի Պատվերի ընդունումը հետևյալ դեպքերում.

- Հաճախորդի (նրա լիազոր ներկայացուցչի) անձը հաստատող փաստաթղթի անհամապատասխանության կասկածի դեպքում,
- Հավելված #7-ում ներկայացված ձևից շեղումներով կամ ջնջումներով ներկայացված Պատվերի դեպքում,
- Եթե Հաճախորդի դրամական միջոցները կամ արժեթղթերը, որոնց նկատմամբ տրվել է Պատվերը, ծանրաբեռնված են այլ անձանց իրավունքներով կամ կալանքի տակ են գտնվում (արգելադրված են),
- Եթե Հաճախորդի ընթացիկ դրամային կամ դեպո հաշվում բացակայում են համապատասխան դրամական միջոցները կամ արժեթղթերը,
- Եթե Հաճախորդի կողմից ներկայացված Պատվերով գործարքի կատարումը հակասում է Հաճախորդի ներդրումային նպատակներին,
- Պատվերում նշված պայմանների՝ ՀՀ օրենսդրությանն ու սույն Կանոններին անհամապատասխանության դեպքում:

5.5. Հաճախորդը կարող է ետ կանչել ներկայացված Պատվերը կամ դրանում՝ ըստ Պատվերի գնային, քանակական կամ ժամանակային պայմանների փոփոխություններ կատարել, եթե տվյալ Պատվերով գործարք դեռևս չի կնքվել:

5.6. Պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի հրաժարվել Հաճախորդի Պատվերը կատարելուց այն դեպքում, երբ Պատվերի կատարումը հնարավոր չէ՝ կապված շուկայական իրավիճակների, գործարար շրջանառության սովորույթների և այլնի

հետ: Պատվերը կատարելուց հրաժարվելու դեպքում Պատասխանատու աշխատակիցը այդ մասին անհապաղ տեղեկացնում է Հաճախորդին՝ ուղարկելով համապատասխան հաղորդագրություն կամ ծանուցում:

5.7. Հաճախորդն իրավունք ունի իր դրամական միջոցների մնացորդը կամ դեպո հաշվի արժեթղթերը գերազանցող գործարք կատարել, եթե Բանկի հետ ունի մարժինալ գործարքների կատարման համաձայնագիր:

5.8. Հաճախորդը կարող է արժեթուղթ ձեռք բերելու նպատակով Բանկից ստանալ փոխառություն կամ վարկ, ինչպես նաև իրականացնել կարճ վաճառք, եթե Բանկի հետ ունի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:

5.9. Հաճախորդը կարող է նաև Բանկ ներկայացնել Ռեպո գործարքների, ինչպես նաև ածանցյալ գործիքներով գործարքներ կատարելու Պատվերներ, եթե Բանկի հետ ունի համապատասխան լրացուցիչ համաձայնագիր:

6. ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ԿՆՔՄԱՆ ԵՎ ԿԱՏԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

6.1. Սպասարկողը Պատվերի հիման վրա լրացնում է Ներքին հանձնարարական (Տես Հավելված #9) 2 օրինակից: Մեկ օրինակը մնում է Սպասարկողի մոտ, մյուսը՝ փոխանցվում է պատասխանատու անձին: Սպասարկողի օրինակի վրա Պատասխանատու անձը պետք է նշանագրի «Ընդունված է» և ֆիքսի ընդունման ամսաթիվը և ժամը :

6.2. Սպասարկողը Հաճախորդի Պատվերի հիման վրա Հաճախորդի համապատասխան հաշիվներում սառեցնում է Պատվերի կատարման համար անհրաժեշտ Հաճախորդի դրամական միջոցները և/կամ Արժեթղթերը :

6.3. Պատասխանատու անձի կողմից գործարքները կնքվում են.

- **ֆոնդային բորսայում**՝ Պատասխանատու անձի կողմից բորսայական առևտրի ընթացքում արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով,
- **արտաբորսայում**՝ Պատասխանատու անձի կողմից ֆոնդային բորսայից դուրս արժեթղթի գնման/վաճառքի առաջարկ ներկայացնելու միջոցով:

6.4. Ֆոնդային բորսայում Պատասխանատու անձի կողմից գործարքները կնքվում և կատարվում են ֆոնդային բորսայի կողմից սահմանված կանոններին համապատասխան:

6.5. Արտաբորսայական գործարքները Պատասխանատու անձի կողմից կատարվում են արժեթղթերի շուկան կարգավորող ՀՀ օրենսդրության համաձայն:

6.6. Հաճախորդի Պատվերը կատարելու համար Բրոքերն իր հայեցողությամբ իրավունք ունի ներգրավել նաև այլ կազմակերպություններ, այդ թվում՝ ներդրումային ծառայություններ մատուցող անձանց, ինչպես նաև օգտվել միջազգային և տեղական շուկաներում այլ կազմակերպությունների կողմից տրամադրվող էլեկտրոնային առևտրային համակարգերից:

6.7. Թույլատրվում է իրականացնել պատվերի կատարումը մաս առ մաս, եթե Պատվերով այլ բան նախատեսված չէ:

6.8. Լիմիտային պատվերները Բրոքերի կողմից կատարվում են կախված շուկայի ընթացիկ իրավիճակից:

6.9. Պատասխանատու աշխատակիցը իրավունք ունի կատարել լիմիտային պատվերն ավելի շահավետ պայմաններով, քան նշված է Պատվերում: Այդ դեպքում Հաճախորդի նշած գնի և կատարման գնի տարբերության կեսը հանդիսանում է լրացուցիչ պարգևավճար Բանկի համար, որը գանձվում է Բանկի կողմից, Հաճախորդի՝ Բանկում բացված ընթացիկ դրամային հաշվից:

6.10. Գործարքի արդյունքներով Պատասխանատու աշխատակիցը լրացնում է «Գործարքի վավերագիր» տես Հավելված #10: Գործարքի վավերագիրը կազմվում է 2 օրինակից, մեկ օրինակը տրամադրվում է Սպասարկողին, մյուսը պահվում է վերջինիս մոտ: Գործարքի վավերագիրը Սպասարկողին ներկայացվում է տվյալ գործառնական օրվա ընթացքում, եթե գործարքը կնքվել է մինչև տվյալ գործառնական օրվա ավարտը : Իսկ տվյալ գործառնական օրվա ավարտից հետո կնքված Գործարքի վավերագիրը Սպասարկողին է ներկայավում մինչև տվյալ գործարքի կնքման հաջորդող Գործառնական ավարտը: Սպասարկողը գործարք իրականացնող աշխատակցի օրինակի վրա ստորագրում է՝ նշելով ստացման փաստը և ստացման ժամը:

6.11. Պահառուի/ենթապահառուի կողմից արժեթղթերի նկատմամբ և արժեթղթերից բխող սեփականության և այլ գույքային իրավունքների հաշվառման, այդ իրավունքների ամրագրման, փոխանցման, դադարեցման և այլ գործառնությունների գրանցման հետ կապված ծառայությունների իրականացման համար, Պատասխանատու աշխատակիցը պետք է վերջինիս ներկայացնի անհրաժեշտ փաստաթղթերը: Տվյալ փաստաթղթերը և նրանց ներկայացման ժամկետները սահմանվում են պահառուի/ենթապահառուի նորմատիվ իրավական ակտերով:

6.12. Գործարքի կատարման օրը, Պատասխանատու աշխատակիցը իրականացնում է գործարքի գծով բոլոր հաշվարկները և իրականացնում է համապատասխան ձևակերպումներ: Այդ գրանցումները պետք է կատարվեն պատվերների ստացման կամ ներդրումային որոշման կայացման պահից անհապաղ, սակայն ոչ ուշ, քան տվյալ աշխատանքային օրվա ավարտը:

6.13. Պատասխանատու աշխատակիցը վարում է գրանցումներ Հաճախորդի կողմից տրված յուրաքանչյուր պատվերի մասով: Հաճախորդի կողմից տրված յուրաքանրյուր պատվերի մասին գրանցումները առնվազն պետք է ներառեն հետևյալ տեղեկությունները՝

- հաճախորդի անունը, ազգանունը (անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
- հաճախորդի կողմից տրված պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք, և այլն),
- հաճախորդի կողմից տրված պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրության պատվեր, օպցիոնի իրականացման պատվեր և այլն),
- հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և

արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),

- արժեթղթերի քանակը,
- միավորի գինը,
- ընդհանուր ծավալը,
- հաճախորդի կողմից տրված առանձնահատուկ ցուցումները (առկայության դեպքում),
- հաճախորդի կողմից տրված պատվերի ստացման ճշգրիտ ժամանակը՝ հաջորդաբար նշելով տարին, ամիսը, օրը, ժամը և րոպեն.
- պատվերը գրանցող շահագրգիռ անձի անունը, ազգանունը:

7. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7.1. Եթե Բանկը կատարել է հաճախորդի պատվերը, ապա նա պետք է անհապաղ, սակայն ոչ ուշ, քան գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը տեղեկատվության փոխանցման հուսալի միջոցով հաճախորդին տրամադրի պատվերի կատարման մասին հաշվետվություն (Տես Հավելված # 11):

7.2. Հաճախորդի պատվերի կատարման մասին հաշվետվությունը առնվազն ներառում է հետևյալ տեղեկուկությունները՝

- ներդրումային ծառայություն մատուցող անձի անվանումը,
- հաճախորդի անունը, ազգանունը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը) կամ հաճախորդին նույնականացնող համարը,
- գործարքի կնքման ամսաթիվը (տարին, ամիսը, օրը) և գործարքի կնքման ժամը (րոպե, ժամը),
- հաճախորդի կողմից տրված պատվերի տեսակը (շուկայական, լիմիտային և այլն),
- գործարքի կնքման վայրը (նշվում է ֆոնդային բորսայի անվանումը, այլ կարգավորվող շուկայի անվանումը կամ «չկարգավորվող շուկա»),
- արժեթղթի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը (բացակայության դեպքում՝ թողարկողի անվանումը և արժեթղթի տեսակը, իսկ ածանցյալ գործիքի դեպքում՝ դրա նկարագիրը),
- պատվերում նշված գործարքի տեսակը (առք, վաճառք և այլն),
- պատվերի բնույթը, եթե պատվերում նշված գործարքի տեսակը առք կամ վաճառք չէ (արժեթղթերի բաժանորդագրություն, օպցիոնի իրականացում և այլն),
- արժեթղթերի քանակը (ծավալային արժեթղթերի դեպքում՝ անվանական արժեքը),
- միավորի գինը (ծավալային արժեթղթերի դեպքում չի լրացվում),

– ընդհանուր ծավալը,

– գանձված միջնորդավճարների կամ այլ վճարների համախառն գումարը, իսկ ոչ պրոֆեսիոնալ հաճախորդի պահանջի դեպքում՝ նաև դրանց բացվածքը (ըստ յուրաքանչյուր վճարի),

– հաճախորդի կողմից վճարումները կատարելու պայմանները և ժամկետը, եթե դրանց մասին հաճախորդը նախօրոք չի տեղեկացվել (բանկային հաշվեհամարը և այլն),

– տեղեկատվություն այն փաստի մասին, որ հաճախորդի տեսանկյունից գործարքի մյուս կողմը հանդես է եկել տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար:

7.3. Եթե հաճախորդի պատվերը կատարվում է մասնաբաժիններով, ապա ներդրումային ծառայություններ մատուցող անձը հաճախորդին է ներկայացնում պատվերի կատարման մասին հաշվետվությունը՝ ըստ յուրաքանչյուր մասնաբաժնի:

7.4. Պատվերի կատարման մասին հաշվետվությունը փոխանցվում է Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցով: Դրանք են՝

– առձեռն՝ ստացականի միջոցով,
– փոստային կապի միջոցով,
– Էլեկտրոնային եղանակով,
– ֆաքսիմիլային կապի միջոցով՝ հավաստիանալով, որ հաշվետվությունը ստացվել է հաճախորդի կողմից,
– և այլն:

7.5. Հաշվետվությունը պետք է պարունակի ստույգ տեղեկություններ՝ առանց որևէ էական փաստի խեղաթյուրման և/կամ բաց թողման:

7.6. Հաճախորդին եռամսյակը մեկ անգամ (եթե այլ բան նախատեսված չէ պայմանագրով), մինչև տվյալ եռամսյակին հաջորդող ամսվա 15-ը Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցով տրամադրվում է «Պատվերներով կատարված գործարքների մասին հաշվետվություն» (Տես Հավելված # 12): Հաճախորդին տրամադրվում են նաև քաղվածքներ դրամային և դեպո հաշիվներից՝ համապատասխան Բանկի ներքին կանոնների, ինչպես նաև ՀՀ օրենսդրության պահանջներին:

8. ՖԻԴՈՒՑԻԱՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ՊԱՏՎԵՐԻ ԿԱՏԱՐՄՈՒՄ

8.1. Բանկը, հաճախորդների պատվերները պետք է իրականացնի անկողմնակալ, անհապաղ և ճշգրիտ: Մասնավորապես, այլ հավասար պայմաններ ունեցող պատվերների կատարումը Բանկն իրականացնում է դրանց ստացման հաջորդականությամբ՝ հենվելով բացառապես հաճախորդի կողմից տրված գնային, ծավալային, քանակական կամ առանձնահատուկ ցուցումների վրա, եթե շուկայում ստեղծված իրավիճակներն անհնարին չեն դարձնում դրանց հաջորդական կատարումը:

8.2. Բրոքերային գործարքներ կատարելիս Բանկը պետք է.

- համոզվի, որ գործարք կատարելու համար պատվերները պատշաճ կերպով գրանցվել և ներկայացվել են կատարման,
- այլ հավասար պայմաններ ունեցող պատվերները կատարի ըստ դրանց ստացման հաջորդականության, բացառությամբ, եթե պատվերի բնութագրիչները կամ շուկայում ստեղծված իրավիճակը դա անհնարին են դարձնում, և
- հաճախորդին անհապաղ տեղյակ պահի այն էական դժվարությունների կամ բացասական հանգամանքների մասին, որոնք անհնարին են դարձնում հաճախորդի պատվերի ճշգրիտ կատարումը:

8.3. Ընդհանուր առմամբ ավելի լավ արդյունք ապահովելու նպատակով Բանկը կարող է համախմբել իր հաճախորդի պատվերը կամ իր հաշվին կատարվող գործարքն իր մեկ այլ հաճախորդի պատվերի հետ և այդ ձևով կատարել դրանք, եթե.

- որևէ հաճախորդի համար այն չի ապահովում ավելի վատ արդյունք, քան այն դեպքում, եթե նրա պատվերը կատարվեր առանձին,
- ընդհանուր առմամբ այն բխում է հաճախորդների շահերից:

8.4. Եթե ներդրումային ծառայություն մատուցող անձը իր հաճախորդի պատվերը համախմբում է իր հաշվին կատարվող գործարքի հետ, ապա այդ համախմբված պատվերի մասնակի բավարարման դեպքում նախապատվությունը տրվում է հաճախորդին՝ բացառությամբ, եթե ներդրումային ծառայությունների մատուցման պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

8.5. Բանկը պետք է ձեռնարկի բոլոր խելամիտ քայլերը, որպեսզի կատարի հաճախորդի պատվերը հաճախորդի համար հնարավոր լավագույն պայմաններով՝ հաշվի առնելով գինը, ծախսերը, ժամկետը (արագությունը), պատվերի կատարման և վերջնահաշվարկի իրականացման հավանականությունը, պատվերի ընդհանուր ծավալը, պատվերի բնույթը և պատվերի կատարման հետ կապված այլ գործոններ համաձայն «ՎՏԲ-Հայաստան Բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Պատվերների կատարման կարգի» :

8.6. Բանկը կատարում է Հաճախորդների կողմից ներկայացված Պատվերները համաձայն «Պատվերների կատարման կարգի» դրույթների, ինչպես նաև ըստ դրանց ներկայացման հերթականության, եթե տվյալ Հաճախորդի կողմից չեն ներկայացվել գործարքի կատարման առանձնահատուկ ցուցումներ:

9. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

9.1. Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:

9.2. Սույն Կանոններում փոփոխություններ (լրացումներ) կատարելու մասին տեղեկացումը

Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:

9.3. Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տաս) օր հետո:

9.4. Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելուց հետո:

Հավելված 1 (ա)

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԴԻՄՈՒՄ
(իրավաբանական անձանց համար)

Սույն դիմումով [Ընկերության լրիվ անվանումը] , տեղակայված …….. հասցեով [նշվում է իրավաբանական հասցեն], ի դեմս [Ընկերության ղեկավարի անուն ազգանունը] խնդրում եմ «ՎՏԲ բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացել բրոքերային հաշիվ:

ԸՆկերության ղեկավար _____ *ստորագրություն* Կ .Տ	«……» …….. 20 թ.

……

Հավելված 1 (բ)

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ֆիզիկական անձանց համար)

Սույն դիմումով [Անուն, Ազգանուն] , գրանցված …….հասցեով, խնդրում եմ «ՎՏԲ բանկ Հայաստան» ՓԲԸ-ում բացել բրոքերային հաշիվ:

Դիմող _____ *ստորագրություն*	«……» …….. 20 թ.

Հավելված # 2

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ
(ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

1. ՔԱՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

☐ Բրոքերային հաշվի բացում

☐ № ……..……..…….. հաշվի վավերապայմանների փոփոխություն

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ

ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՖԻՐՄԱՅԻՆ ԱՆՎԱՆՈՒՄԸ	

3. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Իրավաբանական անձի կարգավիճակը	☐ *Ռեզիդենտ* ☐ *Ոչ ռեզիդենտ*
Պետական գրանցման մասին տեղեկություններ (ամսաթիվ, գրանցման համար)	
Հարկային գրանցման կոդ	
Գտնվելու վայրը	
Փոստային հասցեն(եթե տարբերվում է գտնվելու հասցեից)	
Հեռախոս, ֆաքս	
Էլեկտրոնային հասցե	

4. ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ	5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ
(արժույթը)	
(արժույթը)	
(արժույթը)	
(արժույթը)	

6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ	7. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ
☐ Էլեկտրոնային ☐ Փոստային ☐ Ֆաքսիմիլային	☐ Էլեկտրոնային ☐ Ֆաքսիմիլային ☐ Հեռախոսով
☐ Առձեռն ☐ Այլ _____ նշել ձևը	☐ Թղթային ☐ Այլ _____ նշել ձևը

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

☐ Նշանակված է ☐ Նշանակված չէ

9. ՔԱՐՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Անուն, ազգանուն		Հաճախորդի կնիքի նմուշը Կ.Տ
Պաշտոն		
Քարտի լրացման ամսաթիվը « » …… 20 թ.	Ստորագրության նմուշը	

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔԱՐՏ

1. ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՆՐԱՆՑ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՄՈՒՇՆԵՐ

Անուն, ազգանուն		
Պաշտոն		*Ստորագրության նմուշ*
Անձնագրի տվյալները		

Անուն, ազգանուն		
Պաշտոն		*Ստորագրության նմուշ*
Անձնագրի տվյալները		

2. ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ/ՆԵՐԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄ

Ստորագրությունը վավերացվում է , եթե քարտը ստորագրվել է ոչ բանկի ներկայացուցչի ներկայությամբ

☐ Հաճախորդի կողմից *(որի անունից գործում է լիազորված ներկայացուցիչը)* ☐ Նոտարի կողմից

Անվանում		
Անուն, ազգանուն		
Պաշտոն		Կ.Տ
Ստորագրություն		
Քարտի լրացման ամսաթիվը « » ..... 200 թ.		

Հավելված # 4

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿԱՆՔ
(ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀԱՄԱՐ)

1. ՔԱՐՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿԸ

☐ Բրոքերային հաշվի բացում

☐ № ..... հաշվի վավերապայմանների փոփոխություն

2. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Անուն, ազգանուն, հայրանուն	
Ծննդավայրը, ծննդյան ամսաթիվը (օր/ամիս/տարի)	
Ընտանեկան դրությունը	
Քաղաքացիությունը ..... (երկրի անվանումը)	☐ Ռեզիդենտ ☐ Ոչ ռեզիդենտ
Սոցիալական քարտի համարը	
Անձը հաստատող փաստաթղթի անվանումը, համարը, տրման ամսաթիվը	
Գտնվելու վայրը	
Փոստային հասցեն(եթե տարբերվում է գտնվելու հասցեից)	
Հեռախոս, ֆաքս	
Էլեկտրոնային հասցե	

4. ԸՆԹԱՑԻԿ ԴՐԱՄԱՅԻՆ ՀԱՇԻՎՆԵՐ

(արժույթը)	
(արժույթը)	
(արժույթը)	
(արժույթը)	

5. ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐ

6. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

☐ Էլեկտրոնային ☐ Փոստային ☐ Ֆաքսիմիլային

☐ Առձեռն ☐ Այլ _____ նշել ձևը

7. ՊԱՏՎԵՐՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԵՂԱՆԱԿԸ

☐ Էլեկտրոնային ☐ Ֆաքսիմիլային ☐ Հեռախոսով

☐ Թղթային ☐ Այլ _____ նշել ձևը

8. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՆՇԱՆԱԿՎԱԾ ԼԻԱԶՈՐՎԱԾ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐԻ ՄԱՍԻՆ

☐ Նշանակված է ☐ Նշանակված չէ

9. ՔԱՐՏԻ ՀԱՍՏԱՏՈՒՄ

Քարտի լրացման ամսաթիվը « » ..... 200 թ.	Ստորագրության նմուշը

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԻ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)

ՀԱՃԱԽՈՐԴԻ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Արժեթղթերը և նրանց առանձնահատկությունները

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

Արժեթղթերի հետ կապված ռիսկեր

☐ Գերազանց ☐ Միջին

☐ Լավ ☐ Անբավարար

ՀԱՃԱԽՈՐԴԻ ՓՈՐՁԸ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

Գնահատեք ձեր փորձը արժեթղթերի բնագավառում

☐ Հարուստ ☐ Բավարար ☐ Կարճատև ☐ Փորձը բացակայում է

Գնահատեք ձեր փորձը ըստ արժեթղթերի տեսակների

	Հարուստ	Բավարար	Կարճատև	Բացակայում է
Բաժնետոմսեր և այլ բաժնային արժեթղթեր	☐	☐	☐	☐
Պետական, մունիցիպալ և կորպորատիվ պարտատոմսեր	☐	☐	☐	☐
Ածանցյալ գործիքներ	☐	☐	☐	☐
Ինվեստիցիոն հիմնադրամի արժեթղթեր	☐	☐	☐	☐
Արժույթային պայմանագրեր	☐	☐	☐	☐
«Ռեպո» գործարքներ	☐	☐	☐	☐
Մուրհակներ	☐	☐	☐	☐
Արժեթղթերով փոխառություն և վարկավորում	☐	☐	☐	☐
Այլ գործարքներ	☐	☐	☐	☐

_____ (անուն, ազգանունը)
Ստորագրություն

« » ..... 200 թ.

ԲԱՆԿԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ներկայացված տեղեկությունների լիարժեքության և նրանցով գնահատականներ տալու վերաբերյալ

☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար է Հաճախորդին գնահատելու համար

☐ Ներկայացված տեղեկատվությունը բավարար չէ Հաճախորդին գնահատելու համար

Հաճախորդի գիտելիքների և փորձի վերաբերյալ՝ ներդրումային ծառայություններից և/կամ արժեթղթերից բխող ռիսկերը հասկանալու համար

☐ Գիտելիքները և փորձը բավարար են

☐ Գիտելիքները և փորձը բավարար չեն

_____ (*անուն, ազգանունը*)
Ստորագրություն

« » ..... 200 թ.

Հավելված 6 (ա)

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՏԵՂԵԿԱՆՔ ԲՐՈՔԵՐԱՅԻՆ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(իրավաբանական անձանց համար)

Հիմ

ք ընդունելով բրոքերային պայմանագիր N_____, կնքված

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ի դեմս ..... և

..... ի
Ընկերության անվանումը

դեմս ..... միջև
Լիազորված ներկայացուցիչ

«.....» ..... 20.... թվ.-ին, բացվել է հետևյալ բրոքերային հաշիվը՝

Գլխավոր տնօրեն- Տնօրինության նախագահ _____ *ստորագրություն* Կ .Տ	«.....» ..... 20 թ.

.....Հավելված 6 (բ)

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՏԵՂԵԿԱՆՔ ՀԱՇԻՎ ԲԱՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ֆիզիկական անձանց համար)

Հիմք ընդունելով բրոքերային պայմանագիր N_____, կնքված

«ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ-ի ի դեմս ..... և

.....ի միջև
անուն, ազգանուն

«.....» ..... 20.... թվ.-ին, բացվել է հետևյալ արժեթղթերի հաշիվը՝

Գլխավոր տնօրեն- Տնօրինության նախագահ _____ *ստորագրություն* Կ .Տ	«.....» ..... 20 թ.

Հավելված # 7

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ **BANK VTB(ARMENIA)** **БАНК ВТБ (АРМЕНИЯ)**

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆՄԱՆ/ՎԱՃԱՌՔԻ ՊԱՏՎԵՐ N .....

Բրոքերային հաշվեհամարը		*Ամսաթիվը (օր/ամիս/տարի)*
Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)		
Գործարքի տեսակը	☐ Առք ☐ Վաճառք ☐ Այլ _____	

Գնային պայմաններ		Քանակական պայմաններ		Ժամանակային պայմաններ	
Շուկայական	☐	Բավարարել լրիվ	☐	Անմիջապես բավարարել կամ հանել	☐
Լիմիտային	☐	Բավարարել մասնակի	☐	Պահել հերթում մինչև բավարարելը	☐
Ստոպ	☐	Հանել մնացորդը	☐		
Ստոպ լիմիտային	☐				

Թողարկողի անվանումը	Տարբերակիչ ծածկագիր	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական)	Քանակը (հատ)	Հատուկ ցուցումներ

Պատվեր ընդունող _____ *Անուն, ազգանուն* _____ *Ստորագրություն*

Հաճախորդ _____ *Ստորագրություն*

Պատվերի ընդունման ամսաթիվը և ժամը _____ *բոպե/ժամ/օր/ամիս/տարի)*

Կ.Տ.

Հավելված # 8

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՀԵՌԱԽՈՍՈՎ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ԳՆՄԱՆ/ՎԱՃԱՌՔԻ ՊԱՏՎԵՐ N .....

Բրոքերային հաշվեհամարը		*Տրման ամսաթիվը (ցցցց/ամամ/օր/ամիս/տարի)*
Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)		
Գործարքի տեսակը	☐ Առք ☐ Վաճառք ☐ Այլ _____	

Գնային պայմաններ		Քանակական պայմաններ		Ժամանակային պայմաններ	
Շուկայական	☐	Բավարարել լրիվ	☐	Անմիջապես բավարարել կամ հանել	☐
Լիմիտային	☐	Բավարարել մասնակի	☐	Պահել հերթում մինչև բավարարելը	☐
Ստոպ	☐	Հանել մնացորդը	☐		
Ստոպ լիմիտային	☐				

Թողարկողի անվանումը	Տարբերակիչ ծածկագիր	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական)	Քանակը (հատ)	Հատուկ ցուցումներ

Պատվեր ընդունող _____ *Անուն ազգանուն* _____ *Ստորագրություն*

Կ.Տ.

Հավելված # 9

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՆԵՐՔԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆ N ……..

ՆԵՐՔԻՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՀԻՄՔ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԱՏՎԵՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐ

Բրոքերային հաշվեհամարը		Պատվերի ներկայացման ժամանակը
Պատվերի հերթական համար		*Տրման ամսաթիվը (ռոպե/ժամ/օր/ամիս/տարի)*

ՊԱՏՎԵՐՈՒՄ ՆԵՐԱՌՎԱԾ ԳՈՐԾԱՐՔԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏՎՅԼԱՆԵՐ

Գործարքի տեսակը ☐ Առք ☐ Վաճառք ☐ Այլ _____

Գնային պայմաններ		Քանակական պայմաններ		Ժամանակային պայմաններ	
Շուկայական	☐	Բավարարել լրիվ	☐	Անմիջապես բավարարել կամ հանել	☐
Լիմիտային	☐	Բավարարել մասնակի	☐	Պահել հերթում մինչև բավարարելը	☐
Ստոպ	☐	Հանել մնացորդը	☐		
Ստոպ լիմիտային	☐				

Թողարկողի անվանումը	Տարբերակիչ ծածկագիր	Արժեթղթերի դասը	Գործարքի տիպը (բորսայական/արտաբորսայական)	Քանակը (հատ)	Հատուկ ցուցումներ

Սպասարկող _____ « » …… 200 թ.

Ստորագրություն

Հավելված # 10

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ **BANK VTB(ARMENIA)** **БАНК ВТБ (АРМЕНИЯ)**

ԳՈՐԾԱՐՔԻ ՎԱՎԵՐԱԳԻՐ N…….

Հաճախորդի անվանումը (անուն, ազգանունը)	
Բրոքերային հաշվեհամարը	
Պատվերի համարը	
Գործարքի կատարման ամսաթիվը (ռոպե/ժամ/օր/ամիս/տարի)	

Գործարքի կնքման վայրը	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը	Արժեթղթերի տեսակը	Գործարքի տեսակը (առք/վաճառք և այլն)	Պատվերի տեսակը	Գործարքի արտարժույթը	Արժեթղթերի քանակը	Միավորի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճար	Գործարքի կատարման պայմանները (վերջնահաշվարկ)	Գործարքի մյուս կողմը[1]

Պատասխանատու աշխատակից …….. Ստորաբաժանման ղեկավար …….

«____» «_____» 200 թ.

Հավելված # 11

[1] Լրացվում է, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել Բանկը (վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ) կամ Բանկի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար :

ՊԱՏՎԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Անվանումը (անուն, ազգանունը)	
Բրոքերային հաշվեհամարը	
Պատվերի համարը	
Գործարքի կատարման ամսաթիվը (օր/ամիս/տարի)	

Գործարքի կնքման ժամը ժամ/րոպե	Գործարքի կնքման վայրը	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը, թողարկման համարը	Արժեթղթերի տեսակը	Գործարքի տեսակը (առք/վաճառք և այլն)	Պատվերի տեսակը	Գործարքի արտարժույթը	Արժեթղթերի քանակը	Միավորի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճար	Գործարքի կատարման պայմանները (վերջնահաշվարկ)	Գործարքի մյուս կողմը [2]

Ղեկավար՝ (ստորագրություն) (Անուն, ազգանուն) «____» «_____» 200 թ.

Կ.Տ.

Հավելված # 12

[2] Լրացվում է, եթե գործարքի մյուս կողմը հանդես է եկել տվյալ ներդրումային ծառայություններ մատուցող անձը, վերջինիս խմբի մեջ մտնող որևէ այլ անձ կամ այդ ներդրումային ծառայություններ մատուցող անձի մեկ այլ հաճախորդ, եթե գործարքը չի իրականացվել այնպիսի կարգավորվող շուկայում, որն ապահովում է գործարքի մի կողմի անհայտ լինելը մյուսի համար :

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ BANK VTB(ARMENIA) БАНК ВТБ (АРМЕНИЯ)

ՊԱՏՎԵՐԵՐՈՎ ԿԱՏԱՐՎԱԾ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՎՏԲ-ՀԱՅԱՍՏԱՆ ԲԱՆԿ

Հաշվետու ժամանակաշրջան _____

Եռամսյակ

Անվանումը (անուն, ազգանունը)

Թղթերային հաշվեհամարը

Գործարքի կնքման ամսաթիվը	Գործարքի տեսակը (առք/վաճառք և այլն)	Արժեթղթերի տարբերակիչ ծածկագիրը	Արժեթղթերի դասը	Արժեթղթերի քանակը	Միավորի գինը	Գործարքի ընդհանուր գումարը	Գանձվող միջնորդավճար	Գործարքի կնքման հաշվետվության համարը

Ղեկավար՝

(ստորագրություն) (Անուն, ազգանուն)

Կ.Տ.

«____» «_____» 200 թ.